



ՄԱՆԿԱՎԱՐԺ

ՄԱՅՐՈՒԹՅՈՒՆՆ

ԱՄԵՆԱՄԵԾ

ՊԱՐԳԵՎՆ Է

– Իվետա, ի՞նչ է մայրությունը քեզ համար:
 – Ամեն ինչ՝ կյանք, կյանքի նպատակ, սեր ու անսահման նվիրում աշխարհում ամենաթանկ էակի նկատմամբ, նրանով՝ կյանքի հարատևության անվերջանալի բերկրանք: Կարծում եմ՝ բոլոր կանանց համար դժվար է բառերով արտահայտել, թե ի՞նչ է իրենց պարզևս մայրությունը. մայրությունն ինքն ամենամեծ ՊԱՐԳԵՎՆ է, որ մարդ էակահին շնորհել է Աստված:

– Ապրիլի 7-ը Հայ առաքելական եկեղեցին նշում է իբրև Ավետման տոն: Մայրության ավետիսը, քո կարծիքով, աղերսներ ունի՞՞ Սուրբ Կույս Մարիամին տրված այն ավետիսի հետ, թե ինքը փրկիչ է ծնելու: Մի՞թե մեր զավակները մեր «փրկիչները» չեն:

– Կարծում եմ՝ աղերսներ ունի: Սուրբ Կույս Մարիամը մեզ համար ծնեց Փրկչին՝ Հիսուս Քրիստոսին, և նա իր կյանքը նվիրաբերեց մարդկության փրկության համար: Մեր զավակներն էլ մեր փոքրիկ «փրկիչներն» են, մեր հարատևության խորհրդի կրողները:

– Կարողանում ես համատեղել ուսումը կնոջ ու մոր քո պարտականությունների հետ. դժվար չէ՞:

– Դժվար է, բնականաբար: Բայց սիրո հիմքի վրա կառուցված ընտանիքի «գաղտնիքներից» մեկն էլ այն է, որ կարողանում ես բավականություն ստանալ նույնիսկ առաջին հայացքից անհամատեղելի բաները համատեղելու ամենօրյա անհրաժեշտությունից: Ես կարողանում եմ ուսումս համատեղել ընտանեկան պարտականություններիս հետ և սիրով եմ մեծացնում իմ փոքրիկին:

– Մայրության և գեղեցկության տոնի առթիվ ի՞նչ կմաղթեիր հայ կանանց ու աղջիկներին:

– Կմաղթեի, նախ, անսահման սեր, սերը ընտանիք դարձնելու կանացի շնորհ ու կարողություն: Մաղթում եմ նաև հարգանք միմյանց նկատմամբ: Միայն այդպիսի՝ փոխադարձ հարգանքի ու սիրո մթնոլորտում է հնարավոր դաստիարակել խելացի ու արժանավոր սերունդ:



ՎԻԿՏՈՐԻՆԱ՝ ՆՎԻՐՎԱԾ ԱՄՆ-ԻՆ



Օտար լեզուների ամբիոնի վարիչ Սոֆի Սարգսյանի հավաստմամբ՝ 20 օր առաջ վիկտորինայի անցկացման մասին տեղեկացվել են բոլոր դպրոցները, նախապես պատրաստվել թեմային. «Նախորդ տարի ևս բուհի հար-

կի տակ անցկացվեց նման միջոցառում՝ նվիրված Մեծ Բրիտանիայի և

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում ապրիլի 9-ին տեղի ունեցավ հերթական վիկտորինան, որը կազմակերպել էր օտար լեզուների ամբիոնը, և որին մասնակցեցին ՎՊՄԻ հենակետային վարժարանի, Վանաձորի թիվ 5, 10, 11 ավագ դպրոցի սաները: Վիկտորինան նվիրված էր Ամերիկայի Միացյալ Նահանգներին:

Թիմերում ընդգրկված էին 10-11-րդ դասարաններից 4-ական աշակերտներ:

Ժյուրիի կազմում էին օտար լեզուների ամբիոնի դասախոսներ Սոֆի Սարգսյանը, Գայանե Ալավերդյանը, Լուսինե Վարդանյանը, Կարինե Սարգսյանը, ովքեր անաչառորեն և անկողմնակալ կերպով գնահատում էին պատասխանները:

Դիտարժան խաղի ներկաներին ողջունեց բանասիրական ֆակուլտետի դեկան Ալբերտ Պողոսյանը. «Ողջունում են ձեզ, սիրելի՛ աշակերտներ, վստահ եմ, որ այսօր դուք փայլելու եք ձեր գիտելիքներով, և արդար պայմաններում հաղթելու է բարեկամությունը: Հույս ունեմ, որ ձեզանից շատերին բուհի հարկի տակ կընդունենք նաև որպես ուսանողներ»:

Մրցույթի հարցերը բաղկացած էին մի շարք որոնողական, ընտրողական և համադրական առաջադրանքներից: Թիմերին առաջադրված էր գտնել հարցերի ճիշտ պատասխանները՝ հատկացված ժամանակում: Յուրաքանչյուր առաջադրանքից հետո էկրանին ճիշտ պատասխանների հետ միասին ցուցադրվում էին թիմերի հավաքած միավորները: Հարցերը խիստ տարաբնույթ էին. ԱՄՆ-ի հայտնի մարդիկ, տեսարժան վայրեր, նահանգներ, երկրի պատմության կարևոր տարեթվեր, հիշարժան դեպքեր և այլն:

Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորությանը, ինչը մեծ ոգևորություն առաջացրեց դպրոցականների շրջանում: Այդ իսկ պատճառով որոշեցինք վիկտորինան և ամբիոնի ավանդական միջոցառումների շարքում դասել: Այն նպատակ ունի աշակերտների շրջանում մեծացնել սերը անգլերեն լեզվի հանդեպ, ամրապնդել բուհ-դպրոց կապը, զարգացնել կուլտիտիվ աշխատանքը և համագործակցային ուսուցումը»: Վիկտորինային մասնակից դարձան նաև հանդիսատեսի շարքերում գտնվող աշակերտները, ովքեր, ճիշտ պատասխանելով առաջադրված հարցերին, արժանացան խորհրդանշական մրցանակների:

Արդյունքում հաղթող ճանաչվեց ՎՊՄԻ հենակետային վարժարանի թիմը, որը վաստակեց 102 միավոր: Թիվ 11 ավագ դպրոցը գրավեց երկրորդ տեղը՝ վաստակելով 80 միավոր (10-րդ դպրոց՝ 79 և 5-րդ դպրոց՝ 65 միավոր): Միջոցառման կազմակերպիչների կողմից մասնակից թիմերն արժանացան խրախուսական նվերների:

Վանաձորի թիվ 5 ավագ դպրոցի անգլերեն լեզվի ուսուցչուհի Ռոզիսիմե Խանգադյանը շնորհակալություն հայտնեց միջոցառումը նախաձեռնողներին. «Աշակերտներն առաջին անգամ են մասնակցում այսպիսի վիկտորինայի, ուստի փոքր-ինչ հուզված էին: Հուսով եմք, որ հաջորդ տարի ավելի լավ ցուցանիշներով հանդես կգանք: Իսկապես, այստեղ չկան հաղթողներ կամ պարտվողներ, որովհետև բոլորիս նպատակը մեկն է՝ ձեռք բերել գիտելիքներ»:

ՎՊՄԻ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը միջոցառման ավարտին շնորհակալություն հայտնեց օտար լեզուների ամբիոնին ու բոլոր մասնակիցներին դիտարժան և ուսուցողական խաղի համար:

ՆԱՐԻՆԵ ՆԵՐՍԵՍՅԱՆ

ՇՆՈՐՀԱՎՈՐ ՏՈՆԴ, ՊԱՏՄԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ



Ապրիլի 3-ին Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի դահլիճում տեղի ունեցավ միջոցառում «Տոնո՛ւ շնորհավոր, պատմաշխարհագրական ֆակուլտետ» խորագրով: Միջոցառմանը ներկա էին ՎՊՄԻ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը, տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ, պատմաշխարհագրական ֆակուլտետի ղեկան Սամվել Ժամհարյանը, դասախոսներ և ուսանողներ:

Գ. Խաչատրյանն իր շնորհավորական խոսքում նշեց. «Ամեն տարի այս ֆակուլտետը հասնում է բազմաթիվ հաջողությունների. ես մաղթում եմ նորանոր հաջողություններ ու ձեռքբերումներ ուսումնական գործընթացում: Կոչ եմ անում բոլոր ուսանողներին՝ բարձր պահել ֆակուլտետի, դրանով իսկ՝ ինստիտուտի պատիվը»:

Ֆակուլտետի ուսանողների մասին գովեստով խոսեց ղեկան Ս. Ժամհարյանը. «Մեր ֆակուլտետում ունենք շնորհալիներ և ուսման առաջավորներ, որոնք ակտիվ են ոչ միայն դասերին, այլև հասարակական գործունեության մեջ: Մերոնք աչքի են ընկնում մաս հայրենիքի հանդեպ իրենց սրբազան պարտքը կատարելու գործում: Դրա վառ ասպացույցն է օրերս Չայոց բանակի զորամասերից մեկում ծառայող՝ պատմաշխարհագրական ֆակուլտետի ուսանող Արթուր Չա-

րությունյանի ստացած շնորհակալագիրը»:

Ներկայացվեց տեսանյութ, որում ցուցադրվեց ֆակուլտետի ուսանողների, դասախոսների առօրյան, կենսակերպը, ազատ ժամանցը: Ուսանողները խոսեցին ֆակուլտետի ձեռքբերումների, նվաճումների, Ռուսիայից նոր վերադարձած ուսանողների մասին, որոնք բարձր են պահել ինստիտուտի անունը:

Պատմաշխարհագրական ֆակուլտետի շրջանավարտներից ոմանք արդեն համալրել են դասախոսների շարքերը: Նրանք բարձր են պահում ոչ միայն ֆակուլտետի պատիվը, այլև դասախոսի, մանկավարժի անունը: Միջոցառման ժամանակ ասմունքով և երաժշտական համարներով ելույթ ունեցան ֆակուլտետի ուսանողները:

Ղեկան Ս. Ժամհարյանը հասարակական կյանքում ակտիվություն ցուցաբերած ուսանողներին և նրանց աջակցած դասախոսներին պարգևատրեց պատվոգրերով և հուշանվերներով: Միջոցառման ավարտին ուսանողները շնորհակալություն հայտնեցին ՎՊՄԻ ռեկտոր Գ. Խաչատրյանին, ուսանողական խորհրդի նախագահ Յ. Մատինյանին, մշակույթի կենտրոնի ղեկավար Գ. Չովհաննիսյանին և պատմաշխարհագրական ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ս. Գալստյանին՝ աջակցության համար:

Տատյանա ԱՎԱԳՅԱՆ
«Լրագրություն», 1-ին կուրս

ՇՆՈՐՀԱՎԱԿԱԿԱՆ ՆԱՄԱԿ



ՎՊՄԻ պատմաշխարհագրական ֆակուլտետի ղեկան Ս. Ժամհարյանը ԼՂՀ Պաշտպանության բանակից շնորհակալական նամակ է ստացել: «Ձեր բուհի շրջանավարտ Արթուր Արարատի Չարությունյանը ծառայում է Լեռնային Ղարաբաղի Չանրապետության Պաշտպանության բանակի պատվո-պահակային վաշտում: Կրտսեր սերժանտ Չարությունյանը բարեխղճորեն է կատարում իր սահմանադրական պարտքը հայրենիքի հանդեպ, կարճ ժամանակահատվածում տիրապետել է իր զինվորական մասնագիտությանը, դարձել ուսման գերազանցիկ ու կարգապահ մարտիկ: Ձինվորական կուլեկտիվում վայելում է արժանի հարգանք, օրինակ է ծառայում իր համաժառանգակիցների համար: Անկասկած, հայրենիքի արժանի զինվորի դաստիարակության գործում իր ուսումնառած բուհի ներդրումն անուրանալի է: Շնորհակալություն ենք հայտնում Ձեզ հայրենիքի աննկուն պաշտպան դաստիարակելու համար: Ցանկանում ենք Ձեզ և Ձեր գործընկերներին ամենայն հաջողություններ ու դարաբաղյան երկարակեցություն»:

«Ի՞ՆՉ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆՏՐԵԼ». ՕԳՆՈՒՄ Է ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒՆԵՏԸ



է, ինչը նպաստում է բուհն ավարտելուց անմիջապես հետո հեշտ աշխատանք գտնելուն: Հաշվի առնելով մեր կրթական ծրագրերի որակը, պրոֆեսորադասախոսական անձնակազմի մասնագիտական բարձր կարողությունները, բուհի ընձեռնած լայն հնարավորությունները՝ այսօր վստահաբար կարող ենք ասել, որ ընդունվելով ՎՊՄԻ՝ դուք ետ չեք մնա աշխարհի առաջատար բուհերն ավարտած երիտասարդներից»:

Հոգեբանության ամբիոնի բուհ-դպրոց կապի պատասխանատու, հ. գ. թ. Մ. Մազմանյանն անչափ

«Ի՞նչ մասնագիտություն ընտրել» հարցրադրումը միշտ բարդ ու անխուսափելի է. պատասխանի որոնումները կյանքի տարբեր շրջափուլերում հուզել են բոլորին:

Մասնագիտության ընտրություն կատարելու խնդրի առջև առավել հաճախ կանգնում են ավագ դպրոցի՝ մասնագիտական ընտրություն կատարող աշակերտներն ու դպրոցների շրջանավարտները:

Կյանքի ամենակարևոր և ամենապատասխանատու ընտրությունը կատարելու հարցում պատահիներին օգնության են հասնում ՎՊՄԻ աշխատակիցները՝ փորձելով տարբեր մասնագիտությունների մասին տալ ընդհանուր գաղափար, խոսել մասնագիտական առանձնահատկությունների, ինչպես նաև աշխատաշուկայում դրա պահանջարկի մասին:

Մասնագիտական կողմնորոշման հերթական հանդիպման գաղափարն այս անգամ մանկավարժության ֆակուլտետին էր: Դասախոսներ Մարիաննա Մազմանյանի և Անահիտ Հովհաննիսյանի նախաձեռնությամբ բուհ էին հրավիրվել Վանաձորի ավագ և հիմնական դպրոցների ավարտական դասարաններից աշակերտներ: Բուհ-դպրոց կապի շրջանակներում կազմակերպված հանդիպման բուն նպատակն էր աշակերտների ուշադրությունը հրավիրել «Մանկավարժություն և մեթոդիկա», «Մանկավարժություն և հոգեբանություն», «Սոցիալական մանկավարժություն» մասնագիտություններին:

Մանկավարժության ամբիոնի բուհ-դպրոց կապի պատասխանատու, մ. գ. թ., դոցենտ Ա. Հովհաննիսյանը հակիրճ ներկայացրեց բոլոր հրավիրյալներին և միջոցառման բուն նպատակը: Մասնագիտությունների ներկայացման և դպրոցականների հարցերին պատասխանելու համար հրավիրվել էին ՎՊՄԻ մանկավարժության ֆակուլտետի դեկան, բ. գ. դ. թ. Շահվերդյանը, հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, հ. գ. թ., դոցենտ Ռ. Ավագիմյանը, ՎՊՄԻ հեռակետային վարժարանի տնօրեն, ընդունելության քննությունների պատասխանատու քարտուղար, պ. գ. թ., դոցենտ Ս. Աղաջանյանը, մանկավարժության ամբիոնի դասախոսներ, մ. գ. թ., դոցենտ Ս. Բեժանյանը և Լ. Միրաբյանը:

Աշակերտներին ողջունեց ֆակուլտետի դեկան Թ. Շահվերդյանը. «Ողջունում են ձեզ, սիրելի՛ աշակերտներ, ուրախ են ձեզ տեսնելու բուհի հարկի տակ: Այսօր ձեզ հնարավորություն կընձեռնվի առավել մանրամասն ծանոթանալ մեր ֆակուլտետի կողմից առաջարկված մասնագիտություններին, որոնց պահանջարկը աշխատաշուկայում մեծ

կարևորեց տարվող մասնագիտական կողմնորոշման աշխատանքները, որոնք ուղղված են աջակցելու դպրոցականներին մասնագիտական ընտրության դժվարին գործում. «Մեր նպատակն է ապահովել ձեզ մեր ֆակուլտետի մասին տեղեկություններով ամենաարժանահավատ աղբյուրներից, հաղորդակից դարձնել ձեզ մեր բուհի կրթական միջավայրին, որպեսզի ձեր պատկերացումները բուհի մասին համալրվեն ձեր սեփական ընկալումներով: Դուք այսօր հնարավորություն կունենաք գտնվելու մեր լսարաններում, ժամանակակից համակարգչային տեխնիկայով հագեցած կաբինետներում՝ հաղորդակցվելով մեր դասախոսական կազմի հետ»:

Աշակերտներին իր մասնագիտության ընտրության մասին պատմեց ՎՊՄԻ 2013 թ. շրջանավարտ Լիա Սարուխանյանը, ով այժմ աշխատում է իր մասնագիտությամբ. «Սրանից մի քանի տարի առաջ ես էլ ձեզ նման կանգնած էի մասնագիտություն ընտրելու խնդրի առջև: Անհրաժեշտ էր ընտրել այնպիսի մասնագիտություն, որը աշխատաշուկայում պահանջարկ ունենար, և ես հաճույքով սովորեի: Ընտրությունս կանգ առավ տարրական կրթության կամ, այլ կերպ ասած, դասվարի մասնագիտության վրա: Այսօր ես աշխատում եմ Վանաձոր թիվ 24 դպրոցում, ունեմ 21 աշակերտ: Ես պարտավոր եմ այդ փոքրիկներից մարդ «սարքել», իսկ այդ ամենին հասնելու համար պետք են գիտելիքներ, հմտություններ, նրանցից յուրաքանչյուրին յուրովի մոտենալու, հասկանալու կարողություններ: Ինձ այդ ամենը սովորեցրել է իմ բուհը»:

Ներկաներին ողջունեց նաև ՎՊՄԻ «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտության շրջանավարտ Մելինե Զատինյանը, ով ևս բուհն ավարտելուց հետո աշխատում է. «Բուհը մեզ տալիս է թևեր, իսկ թռչել սովորում ենք ինքներս»:

Մասնագետները ներկայացրին առաջարկվող մասնագիտությունները, խոսվեց ընդունելության կարգի մասին: Ընդունելությունից և մասնագիտական առանձնահատկություններից զատ ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահ Ն. Հովհաննիսյանը հակիրճ ներկայացրեց ուսանողների առօրյան:

Աշակերտները հարց ու պատասխանի միջոցով ամբողջացրին իրենց անհրաժեշտ տեղեկատվությունը. նրանք կասկած չունեին, որ հանդիպումը կօգնի լուծել ապագա մասնագիտության ընտրության խնդիրը:

ՎՊՄԻ ԵՎՄ 9 ՈՒՍԱՆՈՂՆԵՐ ԿՄԵԿՆԵՆ ԵՎՐՈՊԱ

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտն ակտիվորեն ներգրավված է տարբեր միջազգային կրթական նախագծերում, համագործակցում է արտասահմանյան առաջատար բուհերի հետ՝ ապահովելով ուսանողների շարժունությունը:

ՎՊՄԻ տասնյակ ուսանողներ արդեն մասնակցել են «Էրազմուս Մունդուս» ծրագրին, որն աջակցում է եվրոպական բարձրագույն կրթության զարգացմանը, բարելավում և ավելացնում ուսանողների ապագա աշխատանքային գործունեության հնարավորությունները, աջակցում միջմշակութային հաղորդակցության զարգացմանը երրորդ երկրների հետ համագործակցության միջոցով:

Ուսանողների մեծ ակտիվություն և ներգրավվածություն նկատվեց նաև «Էրազմուս Մունդուս» ծրագրի IANUS և IANUS II (Inter-Academic Network Erasmus Mundus) նախագծերում, որոնք ևս ուղղված են դեպի արևելք և արևմուտք, հյուսիս և հարավ՝ միավորելով հին և նոր գործընկերների, բացելով նոր էջ համալսարանների միջև համագործակցության բնագավառում: Նախագծերին դիմած 25 ուսանողներից 9-ը ստացել են կրթությունը եվրոպական այլ բուհերում շարունակելու հրավերներ, ևս մեկը աշխատակազմից՝ Սոֆա Բաբայանը, կմասնակցի Լեհաստանում և Ռումինիայում կայանալիք մեկամսյա փոխանակման դասընթացների:

Շնորհավորում ենք հերթական փորձությունը հաջողությամբ հաղթահարած մեր ուսանողներին և ստորև ներկայացնում նրանց և հրավիրյալ բուհերի անունները.

EMINENCE

1. Մարիաննա Խաժակյան – բակալավրիատ, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն, 2-րդ կուրս, Պորտուգալիա համալսարան, Պորտուգալիա

2. Նարե Գովհաննիսյան – մագիստրատուրա, «Կրթության կազմակերպում» մասնագիտություն, 1-ին կուրս, Ադամ Միցկևիչ համալսարան, Լեհաստան

3. Անդրանիկ Գովեսեֆյան – մագիստրատուրա, «Կրթու-

թյան կառավարում» մասնագիտություն, 1-ին կուրս, Ադամ Միցկևիչի անվան համալսարան, Լեհաստան

4. Թինա Ատամյան – մագիստրատուրա, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն, 1-ին կուրս, Ադամ Միցկևիչի անվան համալսարան, Լեհաստան EMINENCE II

5. Մանուշակ Մարության – բակալավրիատ, «Թարգմանչական գործ» մասնագիտություն, 2-րդ կուրս, Բաբես Բոլիայի անվան համալսարան, Ռումինիա

6. Ռոզա Ղազարյան – մագիստրատուրա, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն, 1-ին կուրս, Ռովիրաի Վիրգիլի համալսարան, Իսպանիա


7. Աննա Թումանյան – մագիստրատուրա, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն, 1-ին կուրս, Ադամ Միցկևիչի անվան համալսարան, Լեհաստան

8. Գասմիկ Գալստյան – մագիստրատուրա, «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտություն, 1-ին կուրս, Ադամ Միցկևիչի անվան համալսարան, Լեհաստան

9. Աննա Բաղդանյան – բակալավրիատ, «Մանկավարժություն և հոգեբանություն» մասնագիտություն, 2-րդ կուրս, Մալմոյի համալսարան, Շվեդիա:

Ուսանողների ոգևորությունը մեծ էր: Սեպտեմբեր ամսին Պորտուգալիա մեկնող Մարիաննա Խաժակյանի հավաստմամբ՝ անչափ ուրախ է նախագծին մասնակցելու համար. «Սա մեծ հնարավորություն է նոր գիտելիքներ և փորձություններ ձեռք բերելու, նոր ժանրությունների, ինչ-չան նաև ուրիշ երկրներում ապրող մարդկանց աշխարհայացքը, վարք ու բարքը ուսումնասիրելու համար»: Նա նաև հավելեց, որ խիստ պարտավորեցնող է միայնակ Պորտուգալիա համալսարանում մայր բուհը ներկայացնելը:

Հիշեցնենք, որ նախագծերին կարող են մասնակցել նաև պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի անդամները: Այդ մասին հավելյալ տեղեկություն կարելի է ստանալ ՎՊՄԻ Կրթական բարեփոխումների բաժնում:



ՀԵՐԹԱԿԱՆ ԲԱՑ ԴԱՍ-ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

գահեռ դասախոսն ստիպված է լինում յուրաքանչյուր ուսանողի հետ անհատական աշխատանք տանել, ուսումնասիրել հանձնարարված խնդիրը, ինչն ավելի դժվար է դասաժամերի սակավության պայմաններում (օրինակ «Կիրառական մաթե-

Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում ամեն տարի «Տվյալների կառուցվածքներ և հենքեր» առարկայի դասավանդման ավարտին կազմակերպվում է բաց դասընթացներ, որի շրջանակներում յուրաքանչյուր ուսանող ներկայացնում է դասընթացի ժամանակ իրեն հանձնարարված խնդիրը: Նա ուսումնասիրում է տեսական նյութը, նախընտրած խնդրի առարկայական ոլորտը, կազմում աղյուսակներ, ձևավորում դրանց կապերը, հաշվի առնում նորմավորման պահանջները, ձևավորում հայեցակարգային մոդելը (ի դեպ, դա գործընթացի ամենաբարդ փուլերից մեկն է), կազմում հարցումներ և այս ամենը հավաքում կոնակային մեյնուի ձևաչափում:

մատիկա և ֆիզիկա» մասնագիտության 4-րդ կուրսում դասախոսություններին հատկացված է 15, լաբորատորիին 22 ժամ):

Ն. Խուրլարյանը նաև նշեց, որ այս անգամ շեղվել են ավանդույթից. ուսանողները ներկայացել էին խորհրդատուի դերում, քանի որ նրանց խնդիրների մեկնաբանությունը լսում և քննարկում էին ոչ միայն ֆակուլտետի դասախոսները, այլև «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողները, որոնք նյութն ուսումնասիրում են ընթացիկ կիսամյակում: Այսպիսով՝ միջոցառումը ստացավ նոր ձևաչափ, այն է՝ բաց դաս փորձի փոխանակման նպատակով:

Իրենց աշխատանքները ներկայացնող ուսանողներին տրվեցին հարցեր, դասախոսական կազմի կողմից արվեցին որոշ դիտողություններ: Քննարկումը բուռն էր, արդյունավետ, միջոցառումը՝ հաջողված և ուսանելի:

Ինչպես նշեց դասընթացը վարող՝ «Ինֆորմատիկայի և տնտեսագիտամաթեմատիկական մոդելավորման ու մեթոդների» ամբիոնի դասախոս, տ. գ. ք. Նունե Խուրլարյանը, դժվարությունն այն է, որ նյութի մեկնաբանությանը զու-

ՀԱՐԱՋԱՏ ՀԱՐԿԻ ՆԵՐՔԻՈ



ՎՊՄԻ կենսաբանաքիմիական ֆակուլտետի և ակադեմիական խորհրդատուների նախաձեռնությամբ տեղի ունեցավ «Մենք քայլում ենք ձեր արահետներով» խորագիրը կրող ցերեկույթ, որին հրավիրվել էին ֆակուլտետի վաստակավոր մանկավարժներն ու աշխատակիցները, ովքեր այլևս բուհում չեն աշխատում (ֆիզ. դաստիարակության տես. և մեթ. ամբիոնի պրոֆեսոր Լյուդվիգ Պետրոսյան, բուսաբ. և աշխ. ամբիոնի դոցենտ Ռոբերտ Աթաբեկյան, դասախոս Օֆելյա Մադաթյան, լաբորանտ Լարիսա Ղարազյոզյան, կենդան., ֆիզ. և բժշկ. ամբիոնի դոցենտ Լենա Զալինյան, լաբորանտներ Վիոլետա Գյուլզադյան և Սիրանուշ Աբգարյան):

ՎՊՄԻ նախկին և ներկա աշխատակիցների հանդիպումն անչափ հուզիչ էր, լի կարոտով ու հուշերով:

Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ Զ. Էվոյանը ողջունեց ներկաներին, շնորհավորեց զեղեցիկ սեռի ներկայացուցիչներին կանանց միասնակի առթիվ և մասնավորապես խոսեց Լյուդվիգ Պետրոսյանի մեծ վաստակի և բուհում կատարած աշխատանքների մասին. «Լ. Պետրոսյանը մեծ ավանդ ունի ոչ միայն բուհի, այլև Վանաձոր քաղաքի մարզական կյանքում: Դահուկավազքում ունեցած նրա հաջողությունները վարակիչ դարձան շատերի համար: Նա ՀՀ վաստակավոր ուսուցիչ է, վաստակավոր մարզիչ և սպորտի վաստակավոր գործիչ, Վանաձոր քաղաքի պատվավոր անդամ, նրա առաջարկով մեր բուհում ստեղծվեց հրաձգարան: Առողջություն քեզ ու երկարակեցություն, տաղանդավոր մարդ տա Աստված, որ 100-ամյակդ պատվով նշենք ՎՊՄԻ-ում»:

Մեծարվեցին բոլոր հյուրերը, ներկաները ողջունեցին միմյանց, թերթեցին անցյալի էջերն ու հիշեցին միմյանց հետ կապված պատմություններ, դրվագներ, որոնցով է նաև հյուսվել հարազատ բուհի պատմությանը:

Ներկաներին ողջունեց ընդհանուր ֆիզդաստիարակության և արտակարգ իրավիճակների հիմնահարցերի ամբիոնի վարիչ Վ. Ղարազյոզյանը: Նա ևս փաստեց, որ պրոֆեսոր Լյուդվիգ Պետրոսյանի օրոք Վանաձորը դարձավ մարզական քաղաք: Ի նշան երախտագիտության և հարգանքի՝ նա գիրք նվիրեց և երկարակեցություն մաղթեց իր ուսուցչին:

Ողջույնի խոսքերն ընդմիջվում էին ֆակուլտետի շնորհալի սաների զեղեցիկ կատարումներով:

Բուսաբանության և աշխարհագրության ամբիոնի վարիչ Ռ. Եդոյանը հիշատակեց աշխատանքային այն ընկերներին, ովքեր հեռացել են կյանքից. ներկաները մեկ րոպե լռությամբ հարգեցին նրանց հիշատակը: Այնուհետ Ռ. Եդոյանը անդրադարձավ հին աշխատակիցներին, խոսեց նրանց վաստակի ու թողած ավանդի մասին:

Կենդանաբանության, ֆիզիոլոգիայի և բժշկագիտության հիմունքների ամբիոնի դասախոս Հ. Գրիգորյանն ասաց, որ անչափ տպավորիչ է նման հանդիպումը, բայց և հուզիչ՝ խոսել նախկին գործընկերների մասին. «Շնորհակալ եմք ձեզ՝ ձեր ավանդի, մարդկային հատկանիշների համար: Այդ երկար տարիների անդուլ աշխատանքը մեզ համար եղել է ոգևորիչ և օրինակելի»:

Անկեղծ գրույցների, զվարճալի պատմությունների տարափ սկսվեց հատկապես քիմիայի ամբիոնի վարիչ Հ. Ղազարյանի ելույթից հետո: Իսկապես, հանդիպման մասնակիցները միմյանց շատ ասելիք ունեին. իրար հետ ապրած օրերն ու աշխատանքային տարիներն այնքան հետաքրքիր պատմություններ են թողել ետևում:

Հանդիպման վերջում կենսաբանաքիմիական ֆակուլտետի ղեկան Զ. Վարդանյանը շնորհակալություն հայտնեց բոլորին հրավերը չմերժելու և ներկա գտնվելու համար: Նա շնորհակալություն հայտնեց նաև Անահիտ Արզումանյանին զեղեցիկ մտահղացման համար, և հույս հայտնեց, որ այդպիսի միջոցառումները վարակիչ կլինեն նաև բուհի մյուս օղակներում. «Մենք իսկապես քայլում ենք ձեր արահետներով, հիշում ձեր բարի գործերն ու խորհուրդները: Այժմ էլ երիտասարդներին ենք կոչ անում հետևել մեզ և մեր օրինակին: Առողջ եղեք և միշտ հիշեք, որ բուհի դռները ձեր առջև միշտ բաց են»:

Կենսաբանաքիմիական ֆակուլտետի ղեկան Զ. Վարդանյանը հյուրերին մանկավարժական կադրեր պատրաստելու գործում ունեցած ավանդի և վաստակաշատ գործունեության համար հանձնեց երախտագրեր և հուշանվերներ: Այնուհետ տեղի ունեցավ փոքրիկ հյուրասիրություն, հնչեցին կենացներ ու բարեմաղթանքներ. հիշողությունները թևածեցին ավելի մտերմիկ փուլ:

Ղեկանի հավաստմամբ՝ առաջիկայում նրանք կայցելեն և երախտագիր կհանձնեն նաև բուսաբ. և աշխ. ամբիոնի դոցենտ Հայկազ Աղաջանյանին, ով առողջական խնդիրների պատճառով հանդիպմանը ներկա չէր:

ՄԵԿ ՏԱՐԻՆ՝ ՄԵԿ ՕՐՈՒՄ

Մայրության օրը կարող էր և բացակայել հայկական օրացույցից, քանզի հայ մայրերն արժանի են ուշադրության կենտրոնում լինել ոչ թե մեկ, այլ 365 օր:

ՎՊՄԻ հենակետային վարժարանի անգլիական հոսքի 12-րդ դասարանցիները Ապրիլի 7-ը՝ մայրության և գեղեցկության տոնը, նշեցին իրենց մոտեցմամբ: Հայերեն և անգլերեն հնչեցին բանաստեղծություններ մայրերի մասին: Միջոցառումն անցկացվեց ինտերակտիվ մեթոդներով, ցուցադրվեցին տեսահոլովակներ, և հնչեցին համաշխարհային ճանաչման երգեր հենց աշակերտների շուրթերից:

Միջոցառման կազմակերպիչ և անգլերենի ուսուցչուհի

Ալլա Փաշինյանը չթաքցրեց իր գոհունակությունը՝ ասելով, որ աշակերտները կարողացան հաղթահարել լեզվական և զգացմունքային դժվարությունները և պատվով ներկայացրին ուսուցչի և աշակերտների համատեղ աշխատանքը:

Տարվա մեկ օրը նվիրեցին մայրերի գովերգությանը, սակայն պետք է փորձենք մնացած օրերը տոն դարձնել մայրերի համար մեր արարքներով:

Լիլիթ ԱՎԵՏԻԿՅԱՆ

ՎՊՄԻ հենակետային վարժարան, անգլիական հոսք, 12-րդ դասարան

ԲԱՑ ԴԱՍ ՎԱՆԱԶՈՐԻ ԹԻՎ 10 ԱՎԱԳ ԴՊՐՈՑՈՒՄ

ՎՊՄԻ համագործակցության և կապերի բաժնի բուհ-դպրոց ենթաբաժնի կողմից իրականացվող միջոցառումների շրջանակում նախատեսված են նաև բաց դասեր հանրակրթական դպրոցների աշակերտների համար, ինչպես նաև համատեղ սեմինարներ ուսուցիչների մասնակցությամբ:

Օրերս Վանաձորի Սայաթ-Նովայի անվան թիվ 10 ավագ դպրոցում անցկացվեց կենսաբանության բաց դաս բնագիտական հոսքի 11-րդ դասարանի աշակերտների համար (թեման՝ «Գենետիկայի զարգացման փուլերը, գենետիկայի

հիմնական հասկացությունները»): Դասը վարում էր ՎՊՄԻ կենսաբանաքիմիական ֆակուլտետի դեկան, կենսաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ Զարուհի Վարդանյանը:

Դասին ներկա էին նաև աշխատանքային խմբի անդամներ, բուհ-դպրոց կապերի համակարգող Ա. Իսկանդարյանը, բուսաբանության և աշխարհագրության ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ն. Ասատրյանը:

ԼԱԲՈՐԱՏՈՐ ՓՈՐՁ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ՎՊՄԻ կենսաբանության և ֆիզիոլոգիայի ամբիոնը դասախոս Արմենուհի Հարությունյանի նախաձեռնությամբ կազմակերպել էր բաց դաս, որին մասնակցեցին Վանաձորի թիվ 11 ավագ դպրոցի բնագիտական հոսքի 10-րդ դասարանի մի խումբ աշակերտներ:

Ա. Հարությունյանի հավաստմամբ՝ այդպիսի բաց դասեր բուհում հաճախ են անցկացվում, որոնք նպաստում են բուհ-դպրոց կապի ամրապնդմանը:

Դասն անցկացվեց մարդու և կենդանիների ֆիզիոլոգիայի լաբորատորիայում: Ա. Հարությունյանի և կենսաբանության ուսուցչուհի Հերմինե Հովհաննիսյանի օգնությամբ աշակերտները դիտարժան լաբորատոր փորձ իրականաց-

րին, որի ընթացքում մանրադիտակներով և տարբեր պատրաստուկների միջոցով ուսումնասիրեցին կենդանական տարբեր օրգանների հյուսվածքային կառուցվածքը: Դասի ընթացքում աշակերտները տեսապարագաների օգնությամբ ծանոթացան նաև մարդու գլխուղեղի և ողնուղեղի կառուցվածքին:

Հ. Հովհաննիսյանը համոզված է, որ այդօրինակ միջոցառումները հնարավորություն են տալիս դպրոցականներին լավագույն պայմաններում փորձեր իրականացնել, տեղում ծանոթանալ բուհի հնարավորություններին և ապագա մասնագիտության ընտրության առումով ճիշտ որոշում կայացնել:

ՎՊՄԻ-ՈՒՄ ԷԻՆ ԹԻՎ 13 ԱՎԱԳ ԴՊՐՈՑԻ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԸ

Բուհ-դպրոց կապի ամրապնդման համար ՎՊՄԻ-ին շարունակում է մարզի տարբեր դպրոցներում անցկացնել բաց դասեր, ինչպես նաև կազմակերպել հանդիպումներ բուհի հարկի տակ:

Հերթական հանդիպման նախաձեռնողն այս անգամ բուհի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետն էր: Վանաձորի թիվ 13 ավագ դպրոցի բնագիտական հոսքի 11-րդ «գ» դասարանի աշակերտները ֆիզիկայի ուսուցչուհի Հ. Նազարյանի հետ այցելեցին ՎՊՄԻ՝ ֆիզիկայի լաբորատորիայում ներկա գտնվելու առարկայական փորձերի:

Ֆիզիկայի ամբիոնի դասախոս, ֆ. մ. թ., դոցենտ Է. Ավագյանը նախ հարցերի օգնությամբ ամփոփեց այն թեմաները, որոնք դպրոցում ուսումնասիրվել են: Աշակերտները գիտելիքների հարուստ պաշար ունեին, ինչը նկատելի

էր հնչեցված հարցերի պատասխաններից: Ուսուցչուհի Հ. Նազարյանի հավաստմամբ՝ դպրոցի նյութատեխնիկական հնարավորությունների սահմաններում երեխաները երբեմն գործնական դասերի միջոցով ֆիզիկայի փորձեր իրականացնում են, ինչն ավելի է հարստացնում մասնագիտական գիտելիքների պաշարը:

Դասախոս Է. Ավագյանը հավելեց, որ ֆիզիկան փորձի գիտություն է, սիրում է գործնական ապացույցներ: Դասախոսը, օգտվելով լաբորատորիայի հարուստ սարքավորումներից, աշակերտների համար էլեկտրականությանը վերաբերող մի քանի փորձեր իրականացրեց:

Հանդիպմանը ներկա ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի դեկան Ս. Խառատյանը հավաստիացրեց, որ մանածոինակ միջոցառումները շարունակական են լինելու:

ՖԼԵՇՄՈՐ ԴՊՐՈՑԻ ԲՎԱՈՒՄ

Բանասիրական ֆակուլտետի «Ռուսաց լեզու և գրականություն» մասնագիտության 4-րդ կուրսի ուսանողուհի Մարիամ Լոռեցյանն արտադրական պրակտիկայի շրջանակներում Վանաձորի Ստ. Զորյանի անվան համար 22 հիմնական դպրոցում կազմակերպել էր ֆլեշմոբ:

Ֆլեշմոբին մասնակցեցին դպրոցի տարբեր դասարան-

ների աշակերտներ, ովքեր Մարիամի ղեկավարությամբ ժամանակակից երաժշտության հնչյունների ներքո պարեցին դպրոցի բակում:

Ուսանողուհու համոզմամբ՝ գեղեցիկ պարերը լցնում են օրը ուրախ տրամադրությամբ և իրենց հետ թարմություն են բերում, ինչը նպաստում է ուսումնական գործընթացին:



ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՈՒ

ՎՊՄԻ գրադարան

1. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Ա., Երևան, 2013 թ.
2. Մ. Աբեղյան, Երկեր, հ. Բ., Երևան, 2013 թ.
3. Ս. Գևորգյան, Հայերենի նույնաբաղադրիչ փոխառությունները, Երևան, 2013 թ.
4. Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 2013 թ.
5. Հ. Գևորգյան, Նիկոլ Դունան, Երևան, 2013 թ.
6. Լ. Մելիքսեթ-Քեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, մատենաշար, գիրք Ա., Երևան, 2013 թ.
7. Սփյուռքագիտություն, տարեգիրք, Երևան, 2013 թ.
8. Ա. Բալյան, Սիմոն Վրացյանի հասարակական-քաղաքական պետական գործունեությունը, Երևան, 2013 թ.
9. Ռ. Կարապետյան, Միգրացիան և հայկական նոր սփյուռքը, Երևան, 2013 թ.
10. Հայաստանի անվտանգությունը տարածաշրջանային ռազմաքաղաքական գործընթացների համատեքստում, Երևան, 2013 թ.
11. Ի. Գ. Արծրունի, Ֆերմենտային կինետիկայի հիմունքներ, Երևան, 2013 թ.
12. Ֆ. Գասպարյան, Դիլեկտորիկների ֆիզիկա, Երևան, 2013 թ.
13. Գ. Սիմոնյան, Ա. Թուրունջյան, Ջրերի գլխավոր իոններ և լուծված զազեր, Երևան, 2013 թ.
14. Յու. Դադայան, Ս. Ստեփանյան, Վերջավոր տարրերի մեթոդը և կիրառությունները, Երևան, 2013 թ.
15. Դ. Ավետիսյան, Ֆինանսաբանկային անգլերեն-ռուսերեն-հայերեն բառարան, Երևան, 2002 թ.
16. Ա. Մարգարյան, Տնտեսության նորաստեղծական արդիականացման հիմնախնդիրները, Երևան, 2013 թ.
17. Հ. Սարգսյան, Ա. Գրիգորյան, Շերտագրական ուսումնասիրությունների մեթոդները, Երևան, 2013 թ.



Մնացական ՔԱԼԱՇՅԱՆ. «Անվերնագիր»
(ՎՊՄԻ շրջանավարտ)

18. Страна высоких вдохновений, фольклор и литературные памятники России, Москва, 2009 г.
19. Златые ключи, фольклор и литературные памятники России, Москва, 2009 г.
20. Жемчужина причудливой формы, фольклор и литературные памятники Украины, Москва, 2011 г.
21. Ты, вечная моя Армения, фольклор и литературные памятники Армении, Москва, 2010 г.
22. Лестница небесная, фольклор и литературные памятники Армении, Москва, 2010 г.
23. Волшебная свирель, фольклор и литературные памятники Беларуси, Москва, 2009 г.
24. Кладезь мудрости и благодати, фольклор и литературные памятники Беларуси, Москва, 2010 г.
25. Спел про лист зеленый я..., фольклор и литературные памятники Молдовы, Москва, 2009 г.
26. Душа, озарившая кодру, фольклор и литературные памятники Молдовы, Москва, 2011 г.
27. Небосвод над моей головой, фольклор и литературные памятники Казахстана, Москва, 2010 г.
28. Льетса песня под домбру, фольклор и литературные памятники Казахстана, Москва, 2009 г.
29. Голос вечности, фольклор и литературные памятники Киргизии, Москва, 2009 г.
30. Ковры по склонам сизых гор, фольклор и литературные памятники Киргизии, Москва, 2011 г.
31. Поэзия любви и мудрости, фольклор и литературные памятники Таджикистана, Москва, 2010 г.
32. Жемчужины океана поэзии, фольклор и литературные памятники Таджикистана, Москва, 2011 г.
33. Свет, идущих из глубины веков, фольклор и литературные памятники Туркменистана, Москва, 2009 г.
34. Сияние немеркнувших звезд, фольклор и литературные памятники Туркменистана, Москва, 2011 г.
35. Смятение праведных, фольклор и литературные памятники Узбекистана, Москва, 2009 г.
36. Аромат расцветающих роз, фольклор и литературные памятники Узбекистана, Москва, 2011 г.
37. Звездная гроздь, фольклор и литературные памятники Азербайджана, Москва, 2009 г.
38. Божественные слова, фольклор и литературные памятники Азербайджана, Москва, 2010 г.
39. Ценнее золота, фольклор и литературные памятники Азербайджана, Москва, 2010 г.
40. А. Осибян, Микобиота Армении, Ереван, 2013 г.

«Ապագա մանկավարժ»

երկաթաբաթերք

Վկայական՝ 727

2001, ՀՀ, Վանաձոր,

Տիգրան Մեծի 36

Էլ. փոստ՝ mankavarzh@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՄԻ

Հրատարակիչ՝

«Ապագա մանկավարժ»

երկաթաբաթերքի խմբագրություն

Տպարանակը՝ 100

Տպագրվել է ՎՊՄԻ-ի տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ

Պատասխանատու՝ ԱՆԻ ԽԱՎԱՏՄՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՏՅԱՆԻ

Լուսանկարները՝ խմբագրության